

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ


Ե. ՓՈՐՈՍՅԱՆ

Երբևէ կամ որ եւ է գրութիւն պետք է ուղղել առ Տնօրէնութիւն ԱՐՄԵ ԱՆՊԵՍ Լուսարի ԳԱԶԻԷ (եղիպսոս)

Adresse:

E. PROSSIAN Direct. - propr. du journal Arménien ARCHALOUYCE LE CAIRE (EGYPTE)

Les annonces sont reçues à des prix très modérés.



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԻՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Les annonces sont reçues à des prix très modérés.

ԲԱՌԱՐՈՂՆԵՐԻՆ

Table with 2 columns: Description of ad types and their prices (e.g., 100 lines for 60, 50 lines for 35).

ԲԱՌԱՐՈՂՆԵՐԻՆ ԿԱՆՈՒԿ ԵՒ ԹՂԹԱՍԱՐԻ ԺԱԽՐԸ

Խնայողութեան ուղղութեամբ գրութիւնք եւ չեն տրուիր:

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ Կանխիկ վճարելու են:

ԱՍ ՄԻՒՂՈՒՄ ԱՆՊԵՍ Բազմազան թարգմանութիւնք եւ անմարդկային պայտանները ուսումնասիրելի վերջ, ու եւ ինչ...

ՆՈՐ ՓՈՓՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐ

—000—

Այժմէն հարկ կը համարինք ուշադրութիւնը հրատարակելու մեր ընթացքներուն թէ՛ առաջին կայ Մարտ 1ին 1903 Արշալոյսի մէջ կարեւոր փոփոխութիւններ պիտի ըլլան...

ՅԱՒԵՐԳԻ ԸՆԴՅՐԵՆԵԱՅ

Գնել փափաքողը կրնան դիմել թերթիս Խմբագրութեան: Թղթակազմի գինն է 10 դահեկան ողջ:

ՏՕՐՔ Ա. Յ. ՔԵՐԵՍՏԵՃԵԱՆ

—0—

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ՛ իր գրիւնիք փոխադրած է Տահէրէն Ի Շարա Ապտ-էլ-Աղիզ, երկու տական թատրոնի կարգը, առաջին փողոցի անկիւնի տունը: Հիւանդ կ'ընդունի ամէն օր ժամը 2էն 4: Մասնաւոր խնամք տալոյց եւ լրջաբան հիւանդութեանց: 333

ԻՆՉ ՊԵՏԻ Է ԸՆՆԵԼ

—0—

Երբ ազգերու եւ ազգերը կազմող անհատներու գործունէութեան եւ ձեռնարկներուն վրայ բարձրատեսակ ամենաթեթիկ ակնարկ մը նետուելու հարկը ըլլայ, եւ մերիւնները բարեբաղդաբար չ'մտադրեն տեղ մը պահեցնալու այդ հարցունքները մէջ, երկու բառով կը վերջացնենք մեր հաշուներովը — Հայերը յետամնաց են:

Յանկերզ մը՝ արգիւնք երեւոյթներու, արգիւնք փորձառութեանց, արգիւնք բազմապիսի գիւպաց, եւ վերջապէս՝ արգիւնք իրողութեանց, որ ամենէն համակ գրիչն ալ, ամենէն գործունեայ ձեռքն ալ, ի հարկին կրնայ համարձակել թուղթի վրայ նետել այդ արտաւը, Հայերու պատկանող թողութիւնը որ արգիւնք վրայ խօսելէ աւելի՛ գործնական պիտի ըլլար միջոցներու վրայ զգեւ, սակայն արմատացած վեթոն բարեփոխելու համար ալ՝ ժամանակին կատարած գերին անհրաժեշտ պէտքը կայ:

Հայերն յետամնաց ենք, կ'ըսենք. ես պիտի հարցնեմ թէ՛ ինչու: Երբ հանրային ձեռնարկ մը մէջ տեղ նետուած է և առանց քաջալերութիւն գտնելու մնացած է. երբ գործ մը լաւ կերպով բացատրուած է և անոր վրայ որոճացողներ

չեն գտնուած. երբ յառաջդիմելու միջոցներ ցոյց տրուած են և Հայերու մեծագոյն մասը ընդգրկած չէ արտասոյտուած գաղափարը. երբ ընկերութիւն մը կազմուած է — ըլլայ՝ բարեգործական, ըլլայ՝ շահասիրական — և անդամ արձանագրուողներ չեն գտնուած. երբ թատերական ներկայացում մը կազմակերպուած է և տոմսերու մէջ մասը Հայերու մէջ սպառած չէ. երբ իշխանութիւն մը ունեցած ենք և իշխաններ չեն գտնուած. երբ վարժարան ունեցած ենք՝ և վարժապետներ պակասած են մեզի. երբ Առաջնորդարան ունեցած ենք՝ և առաջնորդ մը գտնուած չէ՛ հոն՝ իր գրագիրներովը մէկտեղ. երբ եկեղեցի մը ունեցած ենք, և հոն ճեղքեր պակասած է:

Այս ամենուն չ'հաւատալու համար Ազգայնաբան Վահրամ Վարդապետին չափ շիջանակ, երեսուցիկի կառուածներուն չափ ատեն ծախուած, երեսուցի Օտեանին չափ քառորդացէս, Պալեանին չափ է՛հրամ՝ ի պատասխանող... Ս. Օտապաշահանին չափ միակիս... Առաջնորդ Օրբազանին չափ տրամաբան... Գաղաքական փողոցի չափ ֆաշիստներ... Մարկոսոֆ պէյի չափ զուտ ազգասէր, Յակոբ Օճանեանին չափ շիջ գործիչ, Վահան Մալեզեանին չափ բանաստեղծ. Զարէ՛ Սվազիկին չափ թատերասէր, Ալիքիարին չափ իր ճիւղը մշակած, Լևոն Մկրտիչեանին չափ զբաղեւլ և մտապետ. Լորտի մը չափ քաղաքագէտ և հարուստ, ընկերակարականի մը չափ պերճախօս, Յեղափոխականի մը չափ անձուտէր, Եղիշէ Թորոսեանին չափ հաստատաւոր, Ս. Ռաատ Բերտալին չափ կեղծաւոր, Մարի Պէլլէրեանին չափ ժիւղիկալու ըլլալու հարկ չ'կայ. ես իբր պարզ քաղաքացի մը՝ Հայուն թեան պատկանող, պիտի յայտարարեմ թէ՛ « Հայերը յետամնաց են »:

— Ապացոյց, պիտի բերեմ. այնպէս չէ՛: Ե՛րբ հարցումը այնչափ բանաւոր է, որուն գոնէ մէկ ապացոյց չ'տալու, և օրինակներս ալ հորիզոնին վրայ շարժուն առօրին տեսնուածներէն չ'առնելու չափ անխնայ ըլլալու համար, Վահրամ Վարդապետին նորակառոյց տան քարերէն ալ աւելի ապառած ըլլալու եմ:

Ապացոյց կուգէք. չէ՛: Ըսեմ ձեզի. Լորտ մը — անոր կարեւորութիւնը հասկըցնելու հարկ չ'կայ կարծեմ — այս տարի շատ ընդարձակ բանաստեղծութիւն մը ըրած էր Սուտանի վրայ, որ տեղական գրեթէ բոլոր թերթերը նոյնութեամբ հրատարակեցին: Սուտանի մէջ հիմակու հիմակ գիրքը բռնող ազգերը գլխաւորապէս Հայերն ու Յոյներն են: Ինչու՞ Լորտը իր բանաստեղծութեանը մէջ մեծ գովաստող խօսած էր Յոյներուն գրաւած դիրքին և գործունեայ յառաջդիմութեան մասին, ու Հայերու խօսքն անգամ ըրած չէր: Փրանսագէտ ու Արաբագէտներ չ'կարգաւորէր այդ բանաստեղծութիւնը:

Իրակի Յոյները քաղաքական ազգերու մէջ իրենց մասնաւոր տեղը ունեցած են և Հայերը ո՛չ. բայց Լորտը կողմակցութիւն ընելու տպաւորութիւնը թողած չէ մեր վրայ և թէ՛ ինչ ինչ պարագաներու մէջ ալ արգարացուցած է մեր ունեցած կարծիքը. ու թէ՛ չէ այս վերջինը չէ, ուրեմն

ինչու՞ մտացած է Հայերը և Սուտանի Գոթիները, Եանքոները, Իլիւսները, Բաբատարուները, Նիքոլները, Բալիները, Անտրիքոները իր ուշադրութիւնը գրաւած են:

Հարցին է՛ն կնճուտ մասին վրայ ենք ահա՛:

Օրինակ առնենք Իլիւս մը կամ Փօթի մը, որ Սուտան պիտի մեկնի ու հոն նըպարավաճառի կամ վաճառականի խանութ պիտի բանայ. յանգուզն է և գործունեայ, Մուսթիկ պիտի աշխատի քով չորս տարի ծառայած է. անկէ առաջ ալ՝ ճեօրս գաբուրա պիտի աշխատէր կարսոս էր. ու հիմակ ալ որոշած է Սուտան երթալ գործ մը բռնել. Ամեն բանը պատրաստ է. պայուսակը կապուած է, յարսէրները ճեօրակ ձիւնի պէս նորը հինը կարեւորութիւն չունի, բաւ է որ իր յաջողուններուն լաւ հարուի. մէկ բան կը պակսի միայն. դրամագլուխը քիչ է...:

Կ'ըսէ իր մէկ բարեկամին. ան ալ ուրիշներուն ու երկու ժամ վերջ կը տեսնես որ գործը կարգադրուած է. չես գիտեր ո՞ր մէկ նիւթը կամ Միշէլը 2-300 ոսկիի վարկ բացած է՝ ու քանի մը օր վերջ կը լսես որ Սուտանի մէջ նշանաւոր վաճառատուն մը բացուած է կամ նոր նպարավաճառանոց մը՝ որուն ճակատը Իլիւսիտի կամ Փօթիտի երկարահան շքատաները կը զարգարեն:

Ասորին Գրեգոր մը կամ Աստատուր մը միեւնոյն վիճակին մէջ է. Սուտան մեկնելու պատրաստուած է. « Արաքս » նուագախումբին նոր գնած պորտներէն մէկը ձեռք կ'առնէ ու բերին զնեւով բոլոր ուժովը օդը կը թնդացնէ թէ՛ « դրամագլուխս չի բաւեր. օգնեցէք ինծի՛ ձայն ձուն չ'կայ »: մէկը խարուած ըլլալը կը յայտարարէ. ուրիշ մը արդէն ունեցածը գոցուցած ըլլալը կը խօսի ցաւ ի սիրտ. միւս մը հայերուն երես չ'տալու համար ըրած որոշումը կը ծանուցանէ, որովհետեւ շատեր ինքը խաբած են. աւելի ուրիշ մը՝ « ճանք մ' պիտի բան են կ'ըսէ ու կ'անցնի. դեռ քիչ մը անփորձն ալ, և իմ ըսածներուս պէս պիտի շարժի... »: կ'ըսէ, ու այսպէս մեր Գրեգոր աղբարը, երեւակայական Աստատուրին հետ յուսահատած, իրենց ունեցածները մէկտեղ առնելով Սուտան կ'ուղևորին. քանի մը օրէն հոն են արդէն:

Մէկ մէկ խանութ կը վարձեն. ունեցածներն չ'ունեցածներն դրամագլուխ կ'ընեն. քիչ մ'ալ ինքզինքնին իրարմիւ — փայլուն բառը չ'գործածելու համար, որովհետեւ այս բառը « ընտանիքներ » բառին հետ գործածուելով Խորվաթի օթեակները կրնան. զարգարիլ — ցոյց տալու համար՝ մէկ քանի գունագեղ գրաւարներ (փողկապ) ու քանի մ'ալ գոյալը (օսալուած) չապիկներ կը գնեն ու պակսի առջևը նստելով յաճախորդի կ'սպասեն:

Մէկը կուգայ. — Մասնոն այդ տիկն ունի՞ր կը հարցնէ:

Դեռ Մեղքոնեաններուն հետ պէտք եղած բանակցութիւնը վերջացուցած չ'եմ կ'ըսէ մեր Գրեգոր աղբարը, մինչդեռ Մեղքոնեաններուն դիմած ալ չէ խեղճը. աւելի

դրամագլուխ չունի որ մաս մը կանխիկ զրկէ՛ ու բան մը բերու կամ գրելու ալ երես ունենայ:

— Ապու Ղազն՝ կը հարցնէ յաճախորդը:

— Դեռ ճամբան է կ'ըսէ մեր ճարպիկ Գրեգոր աղբարը...:

Ու այդ միեւնոյն մարդը կ'ուղևորի դէպի Աստատուր աղբարը վաճառատունը, եւ կը հարցնէ:

— Սեֆեանց խաւս ունի՞ս:

— Շուտով վաճառականը մտածելով որ չորս անգամ սեֆեանի մէջ կը կայանայ իր բոլոր ունեցածը, կը պատասխանէ թէ՛ 5-10 օրէն միայն կրնայ հասնիլ. պատասխանը խիստ տրամաբանական է արտաքուստ. իսկ ի ներքուստ, օ՛հ, անդ եղիցի լալ և կրճուել ատամանցին՝ վայրը պիտի ըլլար հոն, եթէ աւետարանը գրուած ժամանակ Սուտանի եւ Աստատուր աղբարը վրայ գաղափար ունեցած ըլլային...:

Այսպէս մեր երկու աղբարները ժամանակ մը դրամագլուխի պակասութեան առջև ճիւղի ճիւղի դալին յետոյ օր մ'ալ Գահիրէ կը գառնան ու թէ՛ հարցնես թէ՛ ի՞նչ ըրիք. ի՞նչ եղաւ. ապահով եղիք որ պիտի բան թէ՛ ապրանք տանելու եկած են, թէ՛ հոն խաղի վրայ մեծ գործ կ'ընեն, թէ՛ ապագայում երկաթները քիչ մը ուշ հասած ըլլալուն համար 2500 ոսկիի քիսս մը ըրած են, թէ՛ Սուտանի կառավարական ժողովը ընդարձակ ասպարէզ տուած է հայերուն, թէ՛ երկու հատ ալ հայ ներկայացուցիչ կայ հայերու կողմէ կառավարական շրջանակին մէջ, թէ՛ ոսկին 24 ուշաբէն պակաս դուրս չ'գար հոն, ու 18 ուշաբէն վերածելու համար քիչ մը ստանալու առաջը բաւական պիտի ըլլայ հետը խառնելու համար կայլը: Ամիս մը երկուք կ'անցնի, մեծագործ վաճառականը չ'մեկնի. միմալ՝ իր բաժնի նայելով, ճայիր ճայիր ապրանք կը զրկէ կոր... ստանալ:

Օրին մէկն ալ զարմանք կը հանդիպիս որ այն մեծ սուտ-անական վաճառականը իր բոլոր ունեցածը առնելով վերածած է... և Բեմպէճեանին ժայռի ինքն քիւրիս ետախալ կը բանայ կոր:

Ինչէ՞ն առաջացաւ այս բանը. ինչու՞ Իլիւսը՝ Իլիւսիտի և Փօթիի՝ Փօթիտի եղաւ ու մեր աղբարները քիւրիս ետախալ պիտի բանան մինչև իրենց կեանքին վերջը. թէ՛ ինչու՞ Լորտը իր ճամբան մէջ միայն Յոյները պիտի գոյնէ ու հայերը ոչ. թէ՛ ի՞նչ պէտք է ընել, եթէ չ'կրցայ բացատրել, մնացեալը յայտարարուի:

ԱՐԳՈՍ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Բ.

19 Փետրուար 1903

Սիրելի Չաւէն:

Իմ վերջի նամակիս մէջ գրել խոստացած էի քեզ, խոստումս կը պահեմ:

Նոր տարւոյն հետ երեսուն եկաւ նոր հրատարակութիւն մը՝ որ պարբերական մ'է: Այս պահուս դէմս ունիմ Գ. Ա. Պալեանի « Ժողովուրդ »-ը — մասնաթիւրթ մը:

« Ժողովուրդ »-ը ստան եւ վեց էջեր բաղա՛

կացեալ է, որուն առջին եւ երկրորդ Յունուա-
րի եւ Փետրուարի թիւերը հրատարակելու են
Աղիքանքրիոյ « Արաքս » պարսկէն : Կողքին
վրայ « Ժողովուրդ » ին պայմանները կը կար-
գաւ — « Տարեկան քաժանորդագինն և 5 ժր. 3 ժր.
և 2 ժր. անկն ճեղի նախար » եւ Պ. Ա. Պալ-
եան գիներու այս ալլադանութեամբը նորոյթ
մը կը ներմուծէ հայ մամուլին մէջ :

Երկաթուղիներու մէջ ընդհանրապէս երեք
կարգ կայ, առաջին, երկրորդ եւ երրորդ. կան
ճամբորդներ որք ճեպընթացով կը ճամբորդեն,
ուրիշներ ալ petite vitesseով, պիւստէի խնդիր
վերջապէս, ո՛վ ինչ կրնայ ընել : « Ժողովուրդ »
ալ երեք կարգի բաժանորդ պիտի ունենայ, 2,
3 եւ 5 ժր. ի, բաժանորդներ պիտի ունենայ
ճեպընթացի համար, ուրիշներ ալ petite vitesseի
համար : Միայն թէ երկաթուղիները իրենց սա-
կացոյցը պատրաստած են քիւլմէթրի հաշուով,
չեմ գիտեր թէ « Ժողովուրդ » ի սակացոյցը ինչ
հիման վրայ պատրաստուած է :

« Ժողովուրդ » ին բանիկը ուղղութիւնը
եւ ատոր առաջ ընդհանրապէս ժամանակը
միայն պիտի յայտնէ. բայց ամէն անգամ որ
նոր թիւը մը հրատարակելու է, ուրիշներ իրեն
կը պատճառէ ինչ միշտ, որովհետեւ անիկա նոր
չարժու մը կը նկատուի — չարժու թիւրու-
թեան զեմ. չարժու մը ինչպէս իրականացու-
նէ, ինչպէս իրականացուցուցութիւնն է,
ինչպէս իրականացուցութիւնն է :

Լրագրութեան դործը՝ բնական է իր բար-
ձր անուամբը՝ իր բազմակողմանի զօժարու-
թիւնները ունի : Եւսի բաժանորդագիններու
գանձման խնդիրը կայ, ինչպէս կայ ուրիշ իրեն-
դիր մ'ալ. եթէ մէկու մը ատոր բարձրը ձաղ-
կէ, եթէ անոր ներքին « արտոս մարդը » ե-
րեւան կանէ, այն ատեն պիտի տեսնէ մուրի
մէջ սարքուած խուլ պայքար մը մամուլին եւ
իր անձին զեմ : Պէտք է կանխաւ աչքի առաջ
ունենալ գործին այս կոնիւնները եւ աւելի զօ-
տեպնդիլ անսխործ անակնկալներէ չի ցնցու-
լու համար :

Ինչիւ թէ առաջուր կոխեր ամէն խոչ ու
խուրճ եւ յաջողէր իր այդ ընտրած ձեռնարկին
մէջ :

Սերիւր Զաւէն, այս տողերը գրած միջո-
ցի փողոցը ձայներ մը կը լսեմ. դուրս կը նա-
յիմ պատահանէն. զիմակաւորներ են. բայց ա-
տենք չեն այն զիմակաւորներէն որոնց կը հան-
դիպինք տարւոյն չորս կանակներուն, փողո-
ցը, ընկերական չըջանակներու մէջ, հոս ու հոն,
քիչ մը ամենուրեք : Այս տեսած զիմակաւորնե-
րը անվառ տեսակէն են եւ պարզապէս բարե-
կենդանի կարապետը են, եւ բարեկենդանը ա-
հա եկաւ մտնեցաւ. պարբուր եւ պարահանդէս
ներու առջնացում մը, կերտխուրճի շարժիչ է.
փողը կենդանութիւն կ'առանայ, եւ փոխանակ
բարեկենդանի՝ աւելի ճիշտ պիտի ըլլայ եթէ
ըսենք փողիկներն :

Տեսնենք զուր ինչ ծրագրերն պատրաս-
տած են. ժամանակ մը Պոլսի Միացեալ Ընկե-
րութիւնը կուտար տարեկան պարահանդէս մը.
աներեւակայելի էր տիրող իրարանցումը. ծա-
նոթ ազգերի անձնաւորութիւններէ մասնա-
խումբ մը կը կարգուէր եւ շուտով կը գրուէ-
ին ստանկները. Միացեալ Ընկերութիւնը լը-
մընցաւ. ինչպէս նաեւ իր պարահանդէսները :

Առաջիկայ հինգշաբթի ազգային եկեղեցին
կը ստիչ Վարդանանց եւ հազար ետեւուն եւ
վեց վիաներուն տօնը. Վարդանանցը թէ՛ ազ-

գային եւ թէ՛ կրօնական տօն մ'է. կրնամ ը-
սել թէ աւելի ազգային է քան կրօնական :
Մէկը որ իր կեանքը կը զոհէ երկրին եւ
ապագայ սերունդին բարօրութեանը համար՝ ի-
րաւունք ունի զինքը ծնող հասարակութեանը
յարգանքին. ուրեմն յարգենք այդ վիաներուն
յիշատակը :

Ունինք պարտքեր բնութեան եւ ընկե-
րային. բայց ունինք պարտքեր ալ մեր հա-
մայնքին նկատմամբ, եւ այդ վիաներուն կատա-
րած պարտքը՝ իրենց համայնքին նկատմամբ
ունեցած պարտքերն են :

Երբ նոյն համայնքին վերաբերող զանա-
զան անգամ իրարու նկատմամբ բարոյական
կապով մը կապուած կը սղան ինքզինքնին,
կըր նոյն լեզուն եւ նոյն ազգային աւանդու-
թիւնը կը միացնեն զիրենք նոյնին երգիքին
տակ, կըր իրենց աննստական անձնական շա-
նէն զատ ընդհանրութեան շահ մ'ալ ունին կէտ
նպատակի, այդպիսի համայնք մը միայն իրա-
ւունք ունի իրեն ուրոյն ազդ քոյութիւն ու-
նենալու : Այդպէս չէ՞, սիրելի Զաւէն : Եւ այդ
վիաներուն ունեցած կէտ նպատակին ընդհանու-
րեան շահն էր եւ ոչ ուրիշ բան :

Ժամացոյց կը նայիմ. կէս զիշեր է. քը-
նանաւու ժամը հնչեց. պէտք է հանդատանալ
օրուան խոնջանքն : Բու՛՛ք կ'ընեմ ճրագին եւ
կը մարմն :

Տ'տեսութիւն, Գոյր
ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼԸՆՍԷ

ՆԱՄԱԿ ԱՍՈՒՈՒԹԷՆ
ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԷՆ ՍԵ

Հայ գաղարկանորիւն Ռուս-Թրքա-
կան ամենակազմուցիչ շրայ. — Արժ. Տ.
Աւեջիս Բանասէյ Շաղոյնսի. — Ասիորի
Հայերը. — Շնորհակալիք :

Արժանապատիւ Տ. Աւեջիս Բանասէյ
Շաղոյնսի, որուն Ազգայնորի քաղաքնե-
րն ու գիւղերը հովուական այցելութեամբ
զրկուած լինելը գիտենք, Ասիորի Նա-
մակ մը եւ ներիակալ ճանդանակութեան
ցուցակ մը զրկէ մեկի, որը խորհրդա-
ծութեան առատ նիւթ կը մատակարարէ :

Ընթերցողները պիտի զարմանան նախ
որ՝ Ասիորի մէջ այդչափ թիւով հայեր
կան եւ մինչեւ ցարդ անոնց վրայ խօսուած
չէ, եւ այսօր այդ գրիւթէ անձնաթի մնա-
ցած տեղէն ուր ցնցող ձայն մը կը հըն-
չէ, զի անցնելու համար բոլոր տեղերու ան-
տարբերներուն թէ՛ Ռուսո-Թրքական սահ-
մանազ լիւրջ վրայ հարգաւոր Հայեր մերկ,
բոկոտն, անթիւ ու անուաղ, անտէրուել
ու անողնական, ցրտաստուռ կը դողան,
իրենց աչքերը ուղղելով հեռաբնակ եւ հան-
դըտի մէջ լողաղբ եղբայրներու :

Ռուս կառավարութեան կողմէ՛ հոն
ապստամբող Հայերուն վերջերս եղած առա-

ջարկի մասին արդէն գրուած է. գրուած է
նաեւ նոյն կառավարութեան հայերու դէմ
բռնած անեղբելի ընթացքը՝ զաննք իր
երկրէն վտարելու համար գրուած հրաման-
ներու մասին :

Արժ. Տ. Աւեջիս Բանասէյ այդ տա-
ռապետներու կրած նեղութիւնն ու չար-
չարանքը ակննատեսի խանդաղատանքով մը
ասկէ առաջ բացատրած է « Արշալոյս » ի մէջ և
օգնութեան ձեռք կարկառելու պէտքը պա-
ցուցած : « Արշալոյս » ի վերջին թիւե-
րովն ալ հրատարակուած է Ամերիկայի Կեր-
եպիսկոպոսին սրտառու չ կոչը, որուն վեր-
ջապէս կը փութայ պատասխանել նախ Ա.
սիւրբը՝ ձեռնարկով թեամբ Հայր Շաղոյնսի
և կը ցնցէ քաղցրներուն անտարբերու-
թիւնը, որոնք այս պահուս գեղեցիկայար-
մար բարեկենդան մը տօնելու վրայ կը
մտածեն :

Հայր Շաղոյնսի միայն բարեգործու-
թեան գեղեցիկ օրինակ մը տալով չ'ըւա-
կանանար. նա որ հովուական այցելու-
թեամբ շատ մը նորանոր առաւելութիւն-
ներով պիտի վերադառնայ եւ պիտի ամ-
բողջանէ այն պահանջները, ինչ որ ճրագ-
րած էր ու չ'կրցաւ ընել՝ անագորոյն ու
կանխահաս մահուան հարուածին տակ ինա-
լով, մեր հանգուցեալ ամենախրեւի Տէր
Եղիշի Բանասէյն :

Ահաւասիկ այն շնորհակալեաց նամակը
որուն հանդանակութեան ցուցակ մը կցած
Արժանապատիւ Շաղոյնսի, « Արշալոյս » ի
Խմբագրութեան կը զրկէ ի հրատարակու-
թիւնն :

Պատ. Խմբագրութիւն « Արշալոյս » ի
Ի Գահիրէ

Ներկայիս կուգամ ձեր թերթին միջո-
ցաւ շնորհակալութիւնս յայտնելու Ասիորի քա-
ղաքի բարեպաշտ հայ ժողովուրդին, որոնք քա-
ղաք մը լսելու փափաքով հաւաքուեցան Այդը-
ուսամեար Սիւնու ազա Սարգիսեանի ընդարձակ
ընտանաւորին մէջ, լսեցին ամենայն սիրով կե-
նաց բանին խօսքերուն հետ եւ մեր ազգի ներ-
կայ վիճակի նկարագրութիւնը, մասնաւոր
գաղթականութեան ներկայ անտանելի առ-
տապանքները, որպիսի սրտառու խօսքեր
լուզուած, նոյնքանայն հանդանակեցին ներ-
փակիտլ ցուցակի պարտնական գումարը, որ
Թարբիզու Հալուսեաց Ընկերութեան ուղարկե-
ուի եւ անոնց միջոցաւ գաղթականաց քաշիւ-
ուի : Այս առթիւ մասնաւոր զօնուակութեան
աթոսի է Այդուսամեար Սիւնու ազա Սար-
գիսեանը, որ անձամբ զնաց եւ հաւաքեց խա-
նութիւններն սոյն գումարն, շատերուն ալ յոր-
դոնց որ այսպիսի նուիրական հանդանակու-
թեան մասնակցին, փափաքելի էր որ երկու-
սուսի մէջ Սիւնու ազա Սարգիսեանի բարի օ-
րինակին հետեւէին մեր շատ մը կարող եւ ազ-

գեցիկ ազգայինները, որոնք հեղինակութեան
ունին ժողովուրդի վրայ :

Օրհնելով զնամայն նուիրատուս
Մնամ աղօթարար
Ա. ԲՅՆ. ՇԱՂՈՅՆՍԷ

Ի նպատակ Հայ Գաղթականութեան յ'Ասի-
որի հանդանակալ գրամի գումարը քարոզու-
թեամբ եւ նախագահութեամբ Արժ. Աւեջիս
Բանասէյն : Շաղոյնսի, ի բնակարանի Մեծ Սիւնու
ազա Սարգիսեան 1903 Փետր. 15 :

ՑՈՒՑԱԿ
Արժ. Աւեջիս Բանասէյ. Շաղոյնսի 200. Տիարք Սիւնու-
սի Սարգիսեան 400. Տիարք Միսիսեան 100.
Տիարք Լոյսարարեան 100. Կապուալ Կեր-
եպիսեան 60. Հայկազու Տէր Յովհաննէսեան
50. Աւետիս Պրլիբեան 50. Փիլիպոս Գէլեան
40. Սարգիս Պապիկեան 20. Կիւլպէնի Թոսու-
կան 20. Միլոնի Գէլեան 20. Միւսիս Կարա-
պետ Զիթեան 20. Միւսիս Կիւլեան 40. Ա-
լիբեան Մարտիրոսեան 40. Ալիս եւ Հայկազու-
նի Թոսուկեան 10. Մարտուս Կարապետեան 20.
Ազատայլ Սուկարի 30. Միլիթիսի Մետաք-
սիս 100. Մի քանի անձինք 100. Միլիթիսի Ե-
մանեան 10. Ներթալ Առնաթիս 30. Զոխարի
Շնուկ 10. Ալիբեան Խաչատրեան 25. Միլիթիսի
Պոլս 40. Միլիթիսի Թոսուկեան 20. Հիւսէյնի
Կիւլե 30. Միլիթիսի Կիւլե 10. Մանուէլ Զէթի-
կան 50. Կարապետ Զէթիկեան 50. Եղիս Թո-
սիկեան 25. Բարսեղ Ժամկոչեան 60. Գանդիկ
Սարգիսեան 20. Կապուալ Միլիթիսի 100.
Գէորգ Զարբեան 50. Եղարք Սարբեան 30.
Ստեփան Զէթիկեան 20. Վիլիս Սարբեան 40.
Մրաւաճառ Բաւր 20. Նպարավաճառ Նիկոլի
10. Տիկիս Թէլիսի Գէլեան 10. Ոմն 5 :

Ընդհանուր գումարն. Եզ. ողջ. 2145 :

ՉԿՅ ԵՐԱՅԵՑ
Պօլսոյ ծանօթ երաժիշտներէն Յով-
հաննէս Երաբեան, այս անգամ Ապտ-Էլ-
Ալիզ փողոյ, Շէրիք քաշայի պարտիզին
ճիշտ զինացի տունը հաստատուած ըլլալով,
կիւսուցանէ նոր մեթոտի վրայ լուծակի և
գաշնակի դասեր :

Գիները խեստ գերամատչելի ըլլալով
հանգրձ, մասնաւոր խնամք պիտի տար-
ուի, արճաբու գիւրուսոյց ու արագ եղա-
նակաւ մը աւանդուելու :

Վերոյիշեալ երկու նուագարաններէ
տարբեր գործիքներու փափաք ունեցողնե-
րն ալ պիտի կարենան գոհացում գտնել :

ԴԱՄԻ ՊԵՏԻԿ ԿԱՅ

Մեր չ'վճարող բաժանորդներէն կը
խնդրենք որ իրենց պարտքը փութացնեն
և առանձին նամակներ գրելու չ'ստիպեն
մեզ :

ու՛մ, Պատահում էր որ նորա գիւղերնը մին-
չեւ լոյս մի առանձին սենեակում փակուած խօ-
սում էին : Ինչ էր նորա այնքան երկար խօ-
սակցութիւններն ինքը. ոչ ոք չէր իմանում :
Այդ օրերում երեսեան Օհաննէս Եպիսկո-
պոսը վանումն էր. որի ճարտիկ զարձուածներն
ոչ ոք չէր կարող հաւատարիլ այն ժամանակի
հայերից : Այս եկեղեցական ինչպէս իւր կերպ-
կոպտութիւնն էր ձեռք բերել, այնպէս էլ
ազգային ու եւ պաշտօն եւ առաջնորդութիւնը
խաբէութեամբ էր ձեռք բերում : Ինչ խաղաղ
ժողովուրդի մէջ մտնելու լինէր, անպատճառ խ-
ռովութիւնների պիտի ենթարկէր նրանց, որ
ինչը դիւրութեամբ տիրէր : Այնպէս էլ վար-
ուեց նա վանի խաղաղ ու հանդարտ ժողովուրդի
հետ : Որովհետեւ այդ օրերում վախճանուել էր
վանի թեմակալ առաջնորդը — Գարբիէլ Եպիս-
կոպոսը — Երեսեան Եպիսկոպոսն ուզում էր վա-
նի առաջնորդութեան գահը ձեռք բերել : Երա-
մանի օվ նման սողաց նա վաճառականաց Մի-
սիսի ընկերութեան գաղտնի ժողովում, որոնք
ցնցեց նա ազդունիքները հասկնալով, սկսեց
առանձին զոտա իւրաքանչիւրի անբաւար զիշ-
րել եւ երկպառակութեան որոնները սերմանել :
Շարժ չ'անցած, միմիայն համար կենքը զո-
հող ընկերները այնուս անհայտ թշնամիներ
զարցան. որոնք միմիայն հանդիպելիս՝ չէին
բարևում. այնքան որ թշնամութիւնները լար-
ուել էր. մի փոքր ատիթի էին սպասում, որ
անվերջ պատերազմն սկսուէր :

(Շարունակելի) ԱՎԱՇԱՂՈՒՇ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

(12)
ԳՈՋԱԲԱՇԻՆՆԵՐԸ
(Շարունակութիւն 339 քուէն)

Բազարը տնտեսութեան էր. որ թուրքերն ա-
նիքաւութիւններ էին անում, նրան առաջաբ-
կում էին ընկերները, որ իր արհեստով ոչըն-
չացնէր զէն մարդակերպ գազաններին, բայց
նա ասում էր. որ ինչն ուխտել է ո՛ր երկն
չարքի չը գործել : Հայրենիքի սէրն ու ետան
զը գրողներն հայկական միութեան գիներնե-
րին, որ մոզ Բազարին սպաննէին. քանի որ
նա իւր արհեստով ոչ մի օգուտ չէր ընձայում
ազգին. բայց չը յաջողեցան :

Բազարի անունը տարածուել էր ոչ միայն
վաղաբարձակումում, այլ եւ Մուշում. Կարիսում,
Բաղէում եւ չըջակայ գաւառներում : Ամեն օր
նրա տան նոր — նոր մարդիկներ էին յայտնը-
վում եւ անյայտանում : Նորա զբայցին Ս. Կա-
րապետի վանք ուխտի էր գնում : Բազարը
նրան մի նամակ յանձնեց. ճանապարհին բաց
բաց Կար Մամուսի Սիւնու, այսպէս էր
աւխտաւորի տնտեսը — որ տեսնէր թէ ինչ էր

գրել մոզը (?), բայց նա մի ձերմակ թղթի
կտոր գտաւ. ուրիշ ոչինչ :

Երբ Ս. Կարապետը հասաւ Սիւնու, մի
կարճատեակ սարկաւարդ զիմաւորեց նրան,
ինչպէս նախածանօթ լինէր նա վանքի ուխ-
տաւորին : Սարկաւարդը խնդրեց որ մոզ Բազ-
արի իրեն հասցէին յանձնած նամակը տար :
Սիւնուը յանձնեց, մի անգամ վերայ նայեց
սարկաւարդը եւ գործաւ ուխտաւորի երեսը
նայեց՝ ստելով :

— Հաւատարմութիւնն այսպէս էր, ինչի՞
բաց եւ արել նամակը : Թէեւ Բազարը բաց էր
յանձնել Սիւնուին նամակը. բայց գրերն ան-
յայտացել էին նրա ծաւրերն օղին ցոյց տա-
լուն պէս : Այսպէս էլ պատու իրի էր Բազարը
նամակը տարող Սիւնուին, նորա համար էլ հե-
տաքերու էր տեսնելու թղթի ներքի երես-
ները : Ահա ինչպէս ասել էր մոզը, այնպէս էլ
եղել էր :

Այդ Բազարը խեստ շատ չբաւար վիճա-
կում սպողում էր. հակառակ նորա մոզական
արհեստի հատութեան, մի զաղբիւր կեանք էր
վարում : Շատերը հարց էին անում նրանից .

(*) Մըանից տասն ատրի առաջ մի ռաւ
գցող վարպետ միայն էր մնացել վանում, ո-
րին օ ակր տէր Մուսիսի Գէորգ » էր անուա-
նում ժողովուրդը, որին ճանաչում էին հընա-
խոյզներն եւ տանում էին հետները գաւազնե-
լու հնութեան վայրերը : Իսկպէս էլ ուսմ զը-
ցած տեղերից մի բան էր գուրս գալիս :

— Ինչի՞ այդպէս խեղճ եւ ապուում :

— Այնպէս է մեր ուխտը պատասխանում էր :
Մոզ Բազարը խեստ քիչ էր խօսում. նա
բա կերպարաններ էլ ստորակ էր աղում շա-
տերին : Կարծես թէ իւր աշխարհ գաղուց փոշու-
նել էր : Նա չարեանակ խոր ու մթին մտածում-
ներն մէջ էր : Ինչն էր ստիպում նրան այդ-
պէս խօսնելու. — ոչ ոք չէր իմանում :

Մոզի բնակարանը մտնողների վրայ մի
սարուս էր տիրում : Աւախութիւններն, հար-
սանիքներն եւ կեր ու խումբ երբէք չէր մաս-
նակցում նա : Նորա յարաբերութիւնները մեծ
մասամբ օտար երկրացիներն եւ Արարական տն-
ծանօթ աղբիւրներն հետն էր. բայց եկեղե-
ցուց եւ սովորական աղօթներն իւր չէր մնում :
Ամենայն ինչ նրանում գաղտնիք էր. մինչեւ
անգամ իւր կնիք ու գաւակներն ամենաշնչին
մի գաղտնիք չէր յայտնում նա : Ովքեր էին
նրա մօտ ամեն օր նորանոր յայտնուող մարդիկ-
ոչ ոք չէր իմանում : Մինչեւ որ յանկարծման
եղաւ նա, գաիլը ձեռքում : Թղթի կտորի վրայ
այս տողերը միայն կարդացուեց :
— Ալի աղէն ձեռք առէք, առանց մեր
ներքին նպատակը յայտնելու :

Այսքանից ասելին չէր կարողացել շա-
րունակել : Նորա ձեռքը ստուր էր : Հետեւեալ
առաւօտեան մի գաւառի յայտնուեց նորա տան,
երբ իմացաւ թէ՛ մոզ Բազարը մտնել անմի-
ջապէս անյայտանում :

Մոզ Բազարը միայն Տէր Պօղոսի հետ տե-
սութիւններ էր անում. եկեղեցականներն թը-

Յ. ՓԷՄՊԵՃԵԱՆԻ ԸՆԿ.

Գ.Ա.Ն.Ի.Բ.Է. (ԵԳԻՊՏՈՍ)

391

Մ Ե Ծ Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

ԱՐԵՎԵԼԻԿԱՆ ԿՐԹԱՆՈՏԵՆԵՐՈՒ ԵՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՍԻՆԱՐԿՆԵՐՈՒ
Մասկային պատասխանում մեծապես սիրարեքներ

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ԳԼՈՍՍՈՒԲ ՄՅԵՐԱՆՈՅ
Հնուագրական Հասցի — ՓԷՄՊԵՃԵԱՆԻ ԸՆԿ. ԲԻԼԵՍԻ ԲՈՒ 689

ՀԻՆ ԶԱԳՐԻՑԻ ԴԻՄՈՍՑ
Նամակատուի ԲՈՒ 129

ԲԱՆԱՍՏՈՒԹԻՒՆ

Տիար Նշան Կորկոտեան, որ վերջերս Ձուր-
գերիան եկած է, առաջիկայ կիրակի՝ Փետր.
22 կես օրէ ետք ժամը 3ին, պիտի ատենախօսէ
Լաւրան — Ընթերցատան մէջ:

Յարգելի բանաստեղծ Նիկոլ պիտի կազ-
մեն Ձուրցերիոյ աշխարհագրական գիրքը, ճար-
տարարուեստը, քաղաքական կազմակերպու-
թիւնը եւ այլն: Նոյնպէս Ձուրցերիոյ Հայերը
եւ Ձուրցերացաց Հայաստանը թիւնը:

Ուստի կը հրահրուի հետաքրքիր հասա-
րակութիւնը, օգտուել յարգելի ատենախօսին
ընծայած այս գեղեցիկ առիթին:

Անշուշտ, մի գեղեցիկ սեան ալ իր ներ-
կայութիւնով, պիտի պատուէ այս հանգիստը:

Գործադիր Վարչութեան
Անճնարկիչ
Տ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Ե. ՇԵՆՄԱՆԵԱՆ

ԿԱՆԱՆՑ ԲԱԺԻՆ

ԿԻՈՋ ԱԳՈՒԳԱՆ ()

Ընթերցողի մայրերուն

Արթուր Ինքնիշխան ուղարկած էք արդէն,
Տիկիններ, սա լուրջ հարցումը. Եթէ ամուս-
նոյս վարդ զտարգրութիւն մը պատահի, ինչ
պիտի ըլլայ իմ զակեղներու կացութիւնը:

Ընտանուած եմ որ ձերնէ շատերը այս նիւ-
թով երբեք զբաղած չեն, որովհետեւ գրամի
վերաբերեալ խնդիրներու մասին միշտ ձեր է-
րկիներուն կը դիմէք:

Բայց յաճախ անոնք, ոոյն իսկ անոր հա-
մար որ խնդիրը իրենց կեանքին հետ անուշ-
կից է, չեն մտածեր որ իրենց չիպպատած մէկ
վարկեանին կեանքը իրենցմէ կրնայ հեռանալ,
եւ, այս պատճառով, անփոյթ կը գտնուին ի-
րենց կեանքին վրայ ապահովագրութիւն մը
կընելու մասին. սակայն պզտիկ խորհրդածու-
թիւն մը պիտի բաւէ իրողութեանց ճշգրիտ
գաղափարը տալու համար իրենց:

Միջին հաշուով 40 տարեկան անձերու հա-
րիւրին վրայ, մահացուցական վրայ հիմնուե-
լով, տարին 10ը հողի կը մեռնի. իսկ 20 տար-
ուայ մէջ՝ 259 հողի:

Ուրեմն ոչ մէկ բան այնքան պակաս ա-
պահով է քան կեանքը:

Ձեզի կը մնայ, մայրեր, համոզել ձեր է-
րկիները որ իրենց կեանքին վրայ ապահովա-
գրութիւն մը կ'ընեն, ինչ որ թէ՛ ձեզ եւ թէ՛
ձեր ինքները պիտի հովանաւորէ երբ որ ընտանի-
քին պիտը օրին մէկը անհետի:

Այս սքանչելի հաստատութեան, որ կեանք-
քի ապահովագրութիւնն է, բազմաթիւ տարա-
ձիւները մեզի հիմակ իրենց գործունէութիւնը
պարզած են անտեսազէտներու, վաճառական-
ներու, արուեստաւորներու կամ ազատ ապա-
րէի ներկայացուցիչներու մօտ, որոնց անձ-
նական աշխատութիւնը իրենց հարստութեան
անբաւականութիւնը կը լրացնէ:

Ոչ ոք խորհած է մասնաւորապէս կրնորուն
կոչում ընել:

Սակայն, ընկերաբանը՝ որ ժողովուրդնե-
րու կեանքին յարափոխութիւնը կը դիմէ՝ վեր-
ջապէս կը հաստատէ թէ այսօր աւելի քան անց-
եալին մէջ կ'ընեն ընկերութեան մէջ կարեւոր
տեղ մը կը գրաւէ, եւ թէ իր գերը հակայրէն
ընդամենն է:

Ասկէ չի հեռու իր անշուշտ թէ կ'ընի կո-
րուած ըլլայ իր հրապարակ իր շնորհքը: Ինք
միշտ փակուցութեան, անձնութեան եւ բզ-
զացումի ծովն է որ կը նուաճէ իր ամուսինը եւ
կը զարմացնէ ան յաճախ միամտութեամբ իսկ
այն միջոցներուն զոր կը գործածէ երջանիկ
մայր մը ընելու համար ան, եւ իր տղոց տալու
համար զատարակութիւն մը որուն շնորհիւ
անոնք պիտի ըլլան բարի քաղաքացիներ կամ
առաջինի ամուսններ:

Կանի որ ամուսնացած կ'ընի այսօր իր եր-
բեմնի անձուկ եւ կրաւորական դերէն զուրս

(*) Կը հրատարակուի հանրապետութեան Բարիկ
Femina կանանց յանրակ հանրապետութեան
այն յոյժածը, որ փոխադարձութեան եւ ընտ-
նական հեռահեռութեան վերաբերեալ իսկ շան-
կան սուտարիւն մըն է: Վստան եմ որ մեր շնոր-
հալի ընթերցողները մասնաւոր հաճոյքով պի-
տի կարգան:

Ելած է, պէտք է որ յատկապէս իրեն դիմում
ընենք:

Եթէ կ'ընոյ համար գերաբացած է զրամ շահիլ,
ձախտելու առիթներն ալ բազմապատկուած են:
Ընտանեկան կեանքի նոր պայմանները, ար-
ուեստները, գրականութիւնը, ստեղծած են ի-
րեն համար ճոխութեան պէտքը զոր երբեմն
չունէր, եւ իր շնչած աւելի ազատ օդին մէջ
կ'ընէր կըզգայ անոնք մշակելու մարմնը, անց-
եալին աւելի մեծ վազելը մը ըմբռնելու համար:

Ընտանեկան մայրերուն իրական ծառայու-
թիւն մը մատուցանելու մտադրութեամբ, կը
ձանձօթանանք իրենց այն ընկերութիւնը որ
ամենէն աւելի կարող է նպաստել այդ նպատա-
կին իրագործման: Այդ ընկերութիւնն է ՄԻԻ-
ՉՈՒԱԼ ԼԱՅՑԸ որուն երաշխաւորեալ գրամա-
գրութիւնը կ'անցնի մէկ միլիոնը 970 միլիոն ֆրան-
քը եւ որ ամբողջ աշխարհի կեանքի ապահու-
ման գործակալ ընկերութեանց էն հարուստը եւ էն
կարեւորն է: Իր կեդրոնատեղին Նիւ-Եորք.
եւ զիս վերջերս Եգիպտոսի փոխ-ընդհանուր
գործակալութիւնը յանձնուած է Տիար Օհան.
Եան եւ Ընկերութեան ի Գահիրէ:

Ամեն կերպ գատողութիւններէ աւելի
պարզ օրինակ մը գաղափար մը պիտի տայ այս
մեծազօր ընկերութեան անստղիւս եւ անբաղ-
գատելի առաւելութեանց վրայ, որոնք անվի-
ճելի կ'ընեն իր տուած բոլորներուն ուժը:

— Երեսուն տարեկան անձ մը կը փոփարկ
իր կնոջ ձեռք 10,000 ֆր. երբ որ մեռնի, եւ
կամ համապատասխանող ցում վճարելու տա-
րիկան եկամուտ մը (եթէ չունէր գրամագրութի
մը տարողականներուն ենթարկել իր կ'ընէր). Ուս-
տի կ'ապահովագրուի ՄԻԻՉՈՒԱԼ ԼԱՅՑԻ ցումը
278.80 ֆր. ի (ոչ իսկ 11 ոսկի) յոյժ մը վը-
ճարելով ամէն տարի:

Ի դէպ մահու, այրին պիտի ունենայ ան-
միջապէս 10,000 ֆր. ի որոշուել գրամագրուի
մը եւ կամ ցում կ'ընէր մը, որը եթէ ապա-
հովագրութիւն մահը առաջին տարին անդի ու-
նենայ, 278.80 ֆր. ի փոխարէն 10,000 ֆր.
ի անհամեմատ օգտաւորում մը առաջ պիտի
գայ:

Արդ, ապահովագրեալը երաւունք պիտի
ունենայ երբորդ տարիէն վերջ ջնջելու իր բո-
լիսը, որ անձնելով երաշխաւորեալ գումար մը,
կամ ստանալով համեմատական անվճար վեղջ-
եալ բոլիս մը, եւ կամ անվճար յետաձգելով
որոշ պայմանաժամի մը համար ամբողջական
ապահովագրութիւնը, նաեւ պիտի կրնայ, միշտ
բոլորին մէջ ցոյց տուած ցուցակին համաձայն,
ստանց ձեւակերպութեանց, լոկ 5 0/0 անոտով,
փոխ գրամ առնել ընկերութեանէ:

Եթէ միջոցն 20 տարի բրիտանացի վճարել
վերջ ողջ մնայ, պիտի կրնայ ջնջել իր բոլիսը
զանձնելով երաշխաւորեալ գումարը, ինչպէս
նաեւ քան տարուան մէջ բարձրած շահերը:
Ընկերութիւնը զուտ եւ զուտ փոխադարձ ըլլա-
լուն, բոլոր շահերը ապահովագրողներուն կը
բաշխուին: Այ հաշուով, ոչ միայն իրական
խնայողութիւն մը ըրած եւ քիչ քիչ տարիքը
առած այրին իրեն մեծապէս օգտակար ըլլալու
սահմանած գրամագրուի մը շնորհիւ կ'ըլլայ,
այլ եւ բոլորովին ձրի ապահովագրութեամբ մը
իր կ'ընոյ ապագան ապահոված կ'ըլլայ ամբողջ
քան տարի:

Ահա՛ պերճախօս օրինակ մը:
Դեռ բազմաթիւ օրինակներ կարելի է տալ
մասնաւոր և ՍՊ տողութեան շահատուութեան,
տղոց յատուկ եւ երկու գլխի վրայ ապահովա-
գրութիւններ, առանց աւելցնելու Միլիոն (Mi-
xte) ըսուած շատ ծանօթ թարգման՝ որ յատ-
կապէս յանձնարարելի է իր հիանալի առաւե-
լութեանց պատճառով:

Առ այժմ այսքան. զեռ պիտի խօսինք այս
մասին:

ԳՈՂ ՄԺՏՕ

Տասներկուք ու կէս ֆորմայէ բաղկա-
ցած սոյն հատորը, որ Աղէքսանդրիոյ Ա.
Բաքա՛ տպարանին մէջ հրատարակուած է,
կը վաճառուի տեղակալն ըլլալու հայ իւր.
բազորութեանց քով: Հասցի՝ Միլիոն յատ-
կանայ հայ որբերու:

Գինն է Երկու ֆրանք

Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն

ԼՈՒՐԵՆԻ

ՔԱՅԼ ՍԵ ԵՒՍ

Նրաքս նուագախումբը բաւական քա-
ջալերուած իր անցեալ օրուան տուած ներ-
կայացումէն, կ'ընեն թէ գնած է 25 կը-
տորի չափ նուագներ և յետ այսու իր
սեփական գործիքներուն վրայ պիտի շա-
րունակէ իր գասառութիւնները: Յաջողու-
թիւն եւ յարատեւութիւն:

ԲՕՍՔԱ

Միացեալ խառն Յանձնաժողովոյ սրն-
տուկին ի նպատակ արուած ներկայացումն
ալ, որ երկէ կ'երկոյ տեղի ունեցաւ, պատ-
կանելի հասոյթ մը արտագրելու կոչուած
կ'երեւայ:

Ներկայացումը շատ յաջող անցաւ և
ն. Վստանութիւն Մարկոսով պէյ, աշակ-
ցութեամբ Տիար Յ. Սահանանի՝ պէտք ե-
զածէն աւելին ըրած էին Բուճինիի հը-
րայակերտին վրայ հիացողներու թիւը շատ
ստուար ընելու համար:

Օթեակներուն մէջ Հայ և օտարազգի
ծանօթ անձնաւորութիւններ իրենց ներկա-
յացուցիչները ունէին, որոնց մէջ վճար-
կատելի չէր մնար համակրելի դէմքը՝ Տիար
Չարէ՛ Սվազլի, որ իր գործունէութեամբ
ծանօթ է Եգիպտահայերուն:

Ներկայացումն զուտ արգիւնքին որո-
շապէս ծանօթանալ այժմէն կարելի չէ,
բայց հաւանական ալ չէ որ կազմակերպիչ
վարչութիւնը լուռ մնայ այս մասին և իր
համարատուութիւնը չ'ներկայացնէ հան-
րութեան:

ՀԻՆ ԱՇԽԻ ՍԸ

Արշալոյս յ ընթերցողները կը յիշեն
անշուշտ թէ՛ Այգալոյն Առաջնորդարանը Տ.
Ե. Թորոսեանի գումար մը կը պարտի,
անոր պաշտօնավարութեան ատենէն մնա-
ցած ամականներու փոխան:

Տիար Թորոսեան՝ որ հակառակ իրեն
դէմ ձեռք առնուած ձգձողական ըն-
թացքներու յուսահատողներէն չէ, և գիտէ
թէ Առաջնորդարանը պարզապէս զրկանք
մը ընել կողմէ իրեն, վերջերս անգամ մը
եւ գրաւոր դիմում ըրած է Առաջնորդա-
րանի, ստանալու համար իր պահանջը ե-
ղող ամականներն:

Երկէ երբորդ անգամ ըլլալով ներ-
կայացած էր Առաջնորդարան, ուր շաքա-
թական ժողովը նիստ ունէր և ժողովին
կը նախագահէր Գեր. Յովսէփ Եպիփանոս
Այլապէս:

Ժողովը երբորդ անգամ ըլլալով — միշտ
նախագահութեամբ նորին Գերապատու-
թեան — նկատի առաւ սոյն պահանջի խըն-
դիրն, և դարձեալ ինչպէս նախորդ երկու
անգամները, այս անգամ՝ եւ առանց որոշ
և տրամաբանական եղբակացութեան մը
յանգեւու յետաձգել ուղղեց:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Աստուծոյ Տ. Հ. — Երբ հակառակութեամբ
ստացանք եւ գանձեցինք. ներկայս իբր
ստացական թող ծառայէ ձեզի մինչև ըն-
թացիկ տարւոյ Յուլիս ամսոյն վերջ:

Ուրի (Պարսկաստան) Հ. — Ձեր հա-
մակն ստացանք. երկար ժամանակ է որ
ձեզմէ լուր չունենալին մտատանջութիւն
կը պատճառէր մեզի: Արշալոյս ը վեր-
ջին 345 թիւէն սկսեալ զրկեցինք Ձեր
հասցէին, իսկ Ձեր միւս խնդրածն ալ
մէկ երկու օրէն վերջ պիտի յանձնենք
բաժնին, Ձեր պտտած տեղերուն վրայ ե-
թէ շահեկան տեղեկութիւններ քաղեցիք,

հաճեցէք հաղորդել մեզի ի հրատարակու-
թիւն. հարկ չ'կայ այս բանին համար ձեր
վերագարձին սպասելու:

Ձեր յաջողութիւնները ուրախութիւն
կը պատճառէ մեզի. բայց նամակ ալ
ունիք ի պատասխանի ձերինն:

Վերին Եգիպտոս Հայր Շ. — Ասիոյ թի
մէջ Ձեր գտած ընդունելութիւնը և ցոյց
տուած գործունէութիւնը կը հպարտացնէ
Ձեր համակրիչները: Տառապող Հայ գաղ-
թականութիւնը պիտի օրհնէ զՁեզ որ գոր-
ծունէութեան նախանձելի օրինակ մը կու-
տաք Ձեր գասակարգի ժամ շինողներուն...
Եթէ կարելի է — անկարելի չէ սակայն —
Ձեր բոլոր պտտած տեղերը թնայացուցէք
թմրած սրտերը և բարեգործելու վարժե-
ցուցէք հեռաբնակ մեր եղբայրներն որոնց-
մէ շատերը միայն իրենց համար կապերն
կրկնեցէ՛ք ամէն Հայու՝ թէ տառապող
Հայերու ստուար թիւ մը կայ անդին, որ
մեր ձեռքը կը նային. մի՛ զայրանաք եւ
թէ մերժուիք. այդ զփոխարութիւնը ոչ-
խարաղեալ գայլերուն պատրաստածներն
են. մի՛ վհատիք. ցնծացուցէ՛ք Ձեր հան-
դիպած տեղերը տառապող Հայերուն հա-
մար. ատկէ մեծ մարդասիրութիւն չկայ:

Պէրպէր (Սուտան) Գ. Ն. — Ենթոհա-
կալութեամբ ստացանք Ձեր 12. Փետր.
թուական ապահովագրեալ նամակն: Ներ-
փակեալ մանտա բայց գանձելով Ձեր հա-
ւանք գրեցինք:

«Մաւերդ-ք Հայրենեաց ըր արդէն բոս-
թին յանձնած էինք երբ ձեր վերադառնալ
թուակիրն ստացանք»:

Մեր ըրած դիմումներն ալ ապարդիւն
մնացին և բայց վարչութիւնը որոշ բան
մը չ'ըսաւ ու չէր ալ կրնար ըսել:
Հեգնելու և ծարրելու սովորութիւն
չունինք. եթէ կատակէլ հարկ ըլլայ շատ
մը կատակելիներ ունինք մեզին շատ քիչ
հեռու. ինչ հարկ կայ Սահարան ճամբու-
ղել և պանդխտութիւնէն ի պանդխտութիւն
դըրուած հայրենակորոյս հայու մը արդէն
վերաւոր սիրտը արիւնտուր. քաւ լիցի:

Հիտիւն-ՏԸ ԳԱՐԱՆԵԼԻ ՄԻՋՈՑԸ
ԵՒ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՍԻՒՈՐ ԵՒՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիւսիսային գարնանու միջոցներուն վը-
րայ գրքոյ մը հրատարակած է Տ. Գ. Ա.
Գրանտան էֆ., որ մասնաւորապէս ուսումնա-
սիրած է այդ ախար:

Արքայի, որ «Հիւսիսային արդի ամենա-
յաջող գրքանք» անունը կը կրէ. կը պարու-
նակէ հիւսիսային միջոցային վրայ ծանօթու-
թիւններ, կը խօսի հիւսիսային բուժման արդի
եղանակներուն վրայ, կը ցուցնէ նպատակաւոր
գեղերը եւ հիւսիսային գերմ մնալու ամենակա-
րելու միջոցները:

Արքան Պոլսոյ մէջ շատ ընդունելութիւն
գտած է գրքոյիը եւ հոս ալ կը վաճառուի «պիպ-
լիսթիկ խոփեալ» նորակառոյց չէնքին գիտա-
ցի հայ ծխախոտին խառնուրդը. եւ «Արշա-
լոյս» յի խմբագրութեան քով:

Ս. ՈՒՋՈՒՆՊՈՂՈՍԵԱՆ

Վախի-Էյ Պիտի-Վոլոյց
«Տիւրքիս» ղեկարարին ղեկաւ

Կը վաճառէ նաև ժամացոյցի զանազան
տեսակներէ զատ բուն Թավանայի (Tavan-
ne's Watch) ժամացոյցներ ոսկիէ արծաթէ
և պողպատէ կախարչներով և տոկուն ըլ-
լալը հաստատուած ու փորձուած է:

Կեղծերէն զգուշանալու համար դիմե-
ցէք Տ. Ս. Ուղունպողոսեանին

338

Ս. ՈՒՋՈՒՆՊՈՂՈՍԵԱՆ

Վախի-Էյ Պիտի-Վոլոյց
«Տիւրքիս» ղեկարարին ղեկաւ

Կը վաճառէ նաև ժամացոյցի զանազան
տեսակներէ զատ բուն Թավանայի (Tavan-
ne's Watch) ժամացոյցներ ոսկիէ արծաթէ
և պողպատէ կախարչներով և տոկուն ըլ-
լալը հաստատուած ու փորձուած է:

Կեղծերէն զգուշանալու համար դիմե-
ցէք Տ. Ս. Ուղունպողոսեանին

Հ Ր Է Ծ Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

ՎԱՐՅԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԻՐԱԿԻ 15 ՓԵՏՐՈՒԱՐ 1903

3814	1034	11094	2412	11438	97
220	526	775	1548	1720	1894
1916	2443	3454	4422	4503	4511
5784	6597	6710	6819	6829	6834
7473	8714	9203	9322	10238	10450
			10756	11573	11703

